Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 17-ի N 769 - Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔ-ՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության միգրացիայի ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016 թվականների ծրագրի (այսուհետ՝ գործողությունների ծրագիր) նպատակը Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի՝ ներառյալ ապաստանի ոլորտի օրենսդրության համապատասխանեցումն է միջազգային չափանիշներին և սկզբունքներին, ինչպես նաև Միասնական տնտեսական տարածքում աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումը:

2. Սույն գործողությունների ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության միգրացիայի ոլորտի պետական կարգավորման համակարգի (այսուհետ՝ միգրացիոն համակարգ) բարելավմանն ուղղված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրի առաջին հիմնախնդրի 1.2-րդ միջոցառման ապահովման նպատակով՝ ԵՄ-ում ընդունված չափանիշներին համապատասխանության տեսանկյունից միգրացիան կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի վերլուծության հիման

վրա, և լրացնում է Հայաստանի Հանրապետության միգրացիայի ոլորտի պետական կարգավորման համակարգի (այսուհետ՝ միգրացիոն համակարգ) բարելավմանն ուղղված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը:

3. Հայաստանի Հանրապետությունում 2012-2013 թվականների ընթացքում միգրացիայի ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծությունն իրականացվել է տարբեր կազմակերպությունների և անհատների կողմից: Մասնավորապես, «Աջակցություն միգրացիոն պետական ծառայությանը հզորացնելու միգրացիայի ոլորտի կառավարումը Հայաստանում» ծրագրի ներքո իրականացված գործողության 1.1-ի շրջանակներում Թվինինգ ծրագիրը կատարել է այս ոլորտի օրենսդրության վերլուծություն, ինչպես նաև ԵՄ-ի չափանիշների հետ համեմատությամբ՝ միգրացիայի վերաբերյալ Հայաստանի օրենսդրության և դրա գործնական կիրառության վերլուծություն է իրականացվել Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից: Հետազոտություններ են իրականացվել նաև հասարակական կազմակերպությունների ու անհատ հետազոտողների կողմից: Ելնելով հետազոտությունների և ուսումնասիրությունների բազմազանությունից՝ անհրաժեշտություն առաջացավ դրանք մեկտեղելու, ամբողջականացնելու ու կանոնակարգելու՝ միասնական փաստաթղթի տեսքով ներկայացնելով: Բացի դրանից, այս ոլորտի օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության միանալու միջոցառումների ծրագրով, մասնավորապես, ծրագրի 216-229-րդ կետերով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվել է նաև հետևողականորեն հետամուտ լինել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում միգրանտների և ապաստան հայցողների խնդիրներին, նրանց

սոցիալական պաշտպանության, նրանց իրավունքների ամրագրման և իրականացման հարցերի շուրջ համագործակցությանը վերաբերող կոնվենցիաների ու համաձայնագրերի պահանջների կատարմանը:

5. Եվրամիություն - Հայաստան գործողությունների ծրագրից բխող պարտավորությունների շրջանակում անհրաժեշտ է հասնել Եվրամիության և Հայաստանի միջև մարդկանց տեղաշարժի հեշտացմանն ու ապաստանի և փախստականների վերաբերյալ ազգային օրենսդրության՝ միջազգային փաստաթղթերով սահմանված չափանիշներին ու սկզբունքներին համապատասխանեցմանը:

6. Միասնական տնտեսական տարածք - Հայաստան գործողությունների ծրագրից բխող պարտավորությունների շրջանակում անհրաժեշտ է հասնել Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների քաղաքացիների աշխատուժի ազատ տեղաշարժի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքում հաշվառելու և գտնվելու ընթացակարգի դյուրինացման, Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև սահմանահատման ու այդ տարածքում քաղաքացիների տեղաշարժի դյուրինացման ապահովմանը:

7. Սույն գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները միտված են ապահովելու ապաստան տրամադրելու և միգրացիան կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանությունը Եվրամիության օրենսդրության ու լավագույն ինստիտուցիոնալ կառուցվածքներին, աջակցելու օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերադարձին և հայրենիքում նրանց հետագա վերաինտեգրմանը, կանխարգելելու Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիան, կանոնակարգելու Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների զբաղվածությանը վերաբերող օրենսդրությունը, կատարելագործելու Հայաստանի Հանրապետության սահմանային կառավարմանն ու ապաստանի տրամադրմանն առնչվող օրենսդրությունը, ինչպես նաև Միասնական տնտեսական տարածքի

անդամ պետությունների տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացի աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության մակարդակի բարձրացումն ու դրան ուղղված օրենսդրական կարգավորման ապահովումը:

8. Դրանց լուծմանն է ուղղված միգրացիան կանոնակարգող միջազգային, մասնավորապես, Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված չափանիշներին համապատասխան Հայաստանի Հանրապետության միգրացիոն օրենսդրության բարեփոխումների իրականացման 2014-2016 թվականների գործողությունների սույն ծրագիրը, որը մշակված է հետևյալ տրամաբանությամբ՝

1) հիմնորոշ կամ գերակա ուղղություններից յուրաքանչյուրը ծրագրում նշված հերթական համարի տակ ներկայացված է որպես հիմնախնդիր, որը բաժանված է մի քանի գործողությունների, որոնք ներկայացված են աղյուսակի ամենաձախ սյունակում.

2) յուրաքանչյուր ենթաուղղության դիմաց, հաջորդ՝ 2-րդ սյունակում ներկայացված է տվյալ գործողությունից ակնկալվող արդյունքը.

3) աղյուսակի հաջորդ՝ 3-րդ սյունակում նշված է (նշված են) այդ գործողության իրականացման համար պատասխանատու պետական կառավարման մարմնի (մարմինների) անվանումը (անվանումները).

4) հաջորդ՝ 4-րդ սյունակում նշված է գործողության կատարման ժամկետը (ծրագրով սահմանված գործողություններից ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված է 2014-2016 թվականների միջակայքում ընկած կոնկրետ ժամկետ/ ժամկետներ).

5) հաջորդ՝ 5-րդ սյունակում նշված են գործողության կատարմանը զուգահեռ փոփոխության կարիք ունեցող այլ իրավական ակտերը (ծրագրով սահմանված գործողությունների կատարման բովանդակային առանձնահատկություններից ելնելով որոշ իրավական ակտերի փոփոխությունն իրականացվելու է անհրաժեշտությունը հիմնավորելուց հետո).

6) վերջին՝ 6-րդ սյունակում նշված են յուրաքանչյուր գործողության իրականացումից ստացվող արդյունքների մշտադիտարկման ցուցիչները, որոնք թույլ են տալու գնահատել յուրաքանչյուր գործողության իրականացվածությունն ու առարկայական արդյունքները:

9. Միգրացիան կանոնակարգող միջազգային, մասնավորապես, Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված չափանիշներին համապատասխան Հայաստանի Հանրապետության միգրացիոն օրենսդրության բարեփոխումների իրականաց-ման 2014-2016 թվականների գործողությունների ծրագիրը ներառում է 2014-2016 թվականների ժամանակահատվածում իրականացվելիք միջոցառումներ, որոնք կյանքի են կոչվելու իրավական, վարչական և կիրառական բնույթի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կոնկրետ գործողությունների միջոցով:

10. Սույն ծրագրով նախատեսված գործողություններն ընդգրկում են բնակչության տեղաշարժին առնչվող հարցերի ամբողջ շրջանակը, մասնավորապես, ներառելով՝

1) վիզաների տեսակների, վիզաների տրամադրման կարգի, տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ու պայմանների, վիզայի տրամադրման մերժման հիմքերի, Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու ընդհանուր պայմանների կանոնա-կարգում.

2) կացության կարգավիճակի, դրա տեսակների, կացության կարգավիճակի տրամադրման կարգի, տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ու պայմանների, կացության կարգավիճակի տրամադրման մերժման հիմքերի կարգավորում.

3) աշխատանքային, ուսման՝ ներառյալ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար, ընտանիքի վերամիավորման և ընտանեկան միգրացիային առնչվող հարցերի բարելավում ու միգրանտների իրավունքների հստակեցում.

4) վերադարձող միգրանտների հասարակությունում ինտեգրման գործընթացի կանոնակարգում, ապաստանի տրամադրման, փախստական ճանաչելու, ինչպես նաև ապաստանի ապահովման վերաբերյալ այլ հարցերի վերանայում, առանց ուղեկցության

անչափահասների իրավունքների պաշտպանության ու նրանց իրավունքների իրականացման ապահովման հստակեցում.

5) Հայաստանի Հանրապետության տարածքից օտարերկրացիների ելքի կազմակերպման կանոնակարգում, Հայաստանի Հանրապետություն վերադարձին ու Հայաստանի Հանրապետությունից հեռացմանը (արտաքսմանը) վերաբերող հիմնահարցերի բարելավում.

6) համապատասխան պայմանագրեր (համաձայնագրեր) ստորագրելով ու դրանց կիրառելիությունն ապահովելով՝ հետընդունման (ռեադմիսիայի) գործընթացի կանոնակարգում և դյուրինացում.

7) Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների քաղաքացիների ազատ տեղաշարժի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքում հաշվառելու և գտնվելու ընթացակարգի դյուրինացման, Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև սահմանահատման ու այդ տարածքում քաղաքացիների տեղաշարժի դյուրինացման ապահովման կարգավորումը:

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ | ՆՊԱՏԱԿԸ/ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ/ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ | ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ/ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԸ |
|---|---|---|---|---|
| **ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 1. «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | |
| 1.1.Մուտքի վիզայի տրամադրումը մերժելու հիմքերի ցանկում հետևյալ դրույթների ներառում՝<br>ա) ոչ միայն կեղծ տեղեկություններ,այլ նաև կեղծ կամ անվավեր փաստաթուղթ ներկայացնելը,<br>բ) այցի նպատակի և պայմանների վերաբերյալ հիմնավորում չներկայացնելը, անհրաժեշտ կենսաապահովման միջոցների առկայության, մնալու տևողության կամ իր ծագման (բնակության) պետություն վերադառնալու վերաբերյալ փաստեր չներկայացնելը, ճամփորդական բժշկական ապահովագրության փաստը հաստատող փաստաթուղթ չներկայացնելը,<br>գ) ընթացիկ վեց ամիս ժամանակահատվածի երեք ամիսների օգտագործված լինելը:<br>Նշված դրույթների, ինչպես նաև որպես մուտքի վիզա ստանալու համար պարտադիր տրամադրվող տեղեկություններ նախատեսում: | մուտքի վիզայի տրամադրումը մերժելու հիմքերի հստակեցումը | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 2014 թ. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ.-ի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու և մուտքի վիզայի ժամկետը երկարաձգելու դիմումների հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումների քննարկման, մուտքի վիզաների տրամադրման և մուտքի վիզայի ժամկետի երկարաձգման կարգը, Հայաստանի Հանրա-պետության մուտքի վիզայի տրամադրման, վիզայի ժամկետի երկարաձգման, մերժման, մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելու կամ մուտքի մերժման մասին օտարերկրյա քաղաքացու անձնագրում կատարվող նշման ձևը, Հայաստանի Հանրապե-տության մուտքի վիզաներն ըստ այցելության տեսակի կոդավորելու, Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստացած, մուտքի վիզայի ժամկետը երկարաձգած անձանց տվյալների բանկի վարման, տվյալների մուտքա-գրման և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1268-Ն որոշում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.2. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խախտման հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելը որպես մուտքի մերժման հիմքի նախատեսում | վարչական պատասխանատվության հիմքով մուտքի մերժման հստակեցումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 2015 թ. | |
| 1.3. Մուտքի վիզա տրամադրելը մերժելու պատճառների վերաբերյալ օտարերկրացուն՝ մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով գրավոր տեղեկացում՝ հատուկ ձևանմուշ տրամադրելով | մերժում ստացած օտարերկրացուն՝ պետական լիազոր մարմինների որոշման մասին գրավոր տեղեկացնելու պարտավորության իրականացումը | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014 թ. | ձևանմուշի բովանդակության ու ձևի հաստատման վերաբերյալ իրավական ակտ |
| 1.4. Մուտքի վիզայի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ տեխնիկական պայմանների հստակեցում, մասնավորապես, հետևյալ պայմանների նախատեսում՝<br>ա) օտարերկրացու մեկնման նախանշված ամսաթվից հետո անձնագրի կամ ճամփորդական այլ | վիզա տրամադրելու գործընթացի տեխնիկական պահանջների հստակեցումը | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման | 2014 թ. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ.-ի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու և մուտքի վիզայի ժամկետը երկարաձգելու դիմումների հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումների քննարկման, մուտքի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| փաստաթղթի առնվազն երեք ամիս վավերական լինելը,<br>բ) անձնագրում կամ ճամփորդական այլ փաստաթղթում առնվազն երկու դատարկ էջի առկայությունը,<br>գ) անձնագրի կամ ճամփորդական այլ փաստաթղթի՝ վերջին տասը տարվա ընթացքում տրամադրված լինելը,<br>դ) մուտքի վիզայի համար՝ միջազգային տեխնիկական պահանջներին համապատասխանող լուսանկարի առկայությունը՝ բացառությամբ սահմանի վրա ստանալու դեպքերի,<br>ե) մուտքի վիզայի դիմումի վերաբերյալ որոշում ընդունելն առնվազն 15 օրվա ընթացքում՝ բացառությամբ տուրիստական վիզայի (ներառյալ վիզաների տեսակների համար առանձնահատկությունների նախատեսում՝ տեսակները վերանայելով): | | նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | | վիզաների տրամադրման և մուտքի վիզայի ժամկետի երկարաձգման կարգը, Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի տրամադրման, վիզայի ժամկետի երկարաձգման, մերժման, մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելու կամ մուտքի մերժման մասին օտարերկրյա քաղաքացու անձնագրում կատարվող նշման ձևը, Հայաստանի Հանրապետու-թյան մուտքի վիզաներն ըստ այցելության տեսակի կոդավորելու, Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստացած, մուտքի վիզայի ժամկետը երկարաձգած անձանց տվյալների բանկի վարման, տվյալների մուտքա-գրման և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1268-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թ.-ի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու համար միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ ու հյուպատոսական հիմնարկներ և միայն հրավերի հիման վրա դիմելու իրավունք ունեցող պետությունների՝ ծագումով հայ և որոշակի կատե-գորիայի այլ քաղաքացիների՝ հատուկ պայմաններով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու կարգը հաստատելու մասին» N 1154-Ն որոշումները |
| 1.5. Օրենքի 8-րդ հոդվածում մատնանշված երեք գործողու-թյունների տարբեր հոդվածներով նախատեսում՝<br>ա) օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա տրամադրելը (ժամկետի երկարաձգման) մերժելը,<br>բ) օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելը,<br>գ) օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության մուտք գործելն արգելելը: | առանձնահատկություն ունեցող ընթացակարգերի ամրագրումն առանձին իրավանորմերով | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2015 թ. | |
| 1.6. Մուտքի կարճաժամկետ վիզայի ժամկետի երկարացման իրակա-նացումը միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրա-պետության ոստիկանության կողմից այն դեպքում, երբ օտարերկրացին ներկայացնում է ֆորսմաժորային իրավիճակի ապացույց կամ լուրջ անձնական պատճառներ: | առանց կացության կարգավիճակ ստանալու Հայաստանի Հանրապետությունում մնալու դեպքում կամայական դրսևորումների բացառումը, պատասխանատու լիազոր մարմնի ուղղակի նախատեսումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2015 թ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.7. Մուտքի վիզայի սահմանման մեջ հստակեցում այն մասին, որ մուտքի վիզան Հայաստանի Հանրապետու-թյան տարածքում ոչ ավելի քան երեք ամիս տևողությամբ վեցամսյա ժամկետում գտնվելու համար մեկ, երկու կամ բազմակի մուտքերի թույլտվություն է՝ սկսած Հայաստանի Հանրապետության տարածք առաջին մուտքի օրվանից: | վիզայի սահմանման հստակեցումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2015 թ. | |
| 1.8. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի վերանայում՝ հնարավորության դեպքում այդ մասն ուժը կորցրած ճանաչելով | կամայական որոշումների սահմանափակումն ու խտրականության վերացումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2015 թ. | |
| 1.9. Օրենքի 15-րդ հոդվածի | օտարերկրացիների որոշ | ՀՀ կառավարությանն | 2015 թ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| խմբագրում՝ հստակեցնելով նաև մասնագիտական վերապատրաստման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, սեզոնային աշխատանքների իրականացման, աշխատողների գործուղման, ինքնազբաղվածության և այլ հիմքերը | խմբերի կարգավիճակ ստանալու իրավունքի ապահովումն ու ուղղակի ամրագրումը | առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | | |
| 1.10. Օրենքի 21-րդ հոդվածի եզրութաբանական համապատասխանեցում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին | եզրույթների հստակեցումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | |
| 1.11. Պետության տարածքից թույլատրելի բացակայության ժամանակահատվածի վերանայում՝ նախատեսելով 12 ամիս ժամկետ՝ օրենքով ամրագրված 6 ամսվա փոխարեն: Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացուն ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման կարգավորումն այն դեպքում, երբ մշտական | առանց անհարկի սահմանափակումների ազատ տեղաշարժի իրավունքի իրականացման ապահովումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| կացության կարգավիճակի կորուստը չի հանգեցնում պետությունից հեռացման, և եթե ընտանեկան կամ մասնավոր կյանքն անհնարին է մեկ այլ պետությունում | | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | | |
| 1.12. Մշտական կացության կարգա-վիճակի անվան և բովանդակության քննարկում, իսկ անհրաժեշտության դեպքում համապատասխանեցում | կացության կարգավիճակի տեսակների համապատասխանեցումն ընդունված միջազգային դասակարգմանը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | |
| 1.13. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակի և աշխատանքի թույլտվություն ձեռք բերելու համար (բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի «բ» կետի) դիմումի քննարկման միասնական ընթացակարգի սահմանում, ինչպես նաև միասնական թույլտվության համակարգի ստեղծում, բարձր որակավորում ունեցող օտարերկրացիներին օրենքի 23-րդ հոդվածում ներառելու հարցի | օտարերկրացիների աշխատանքային միգրացիայի կանոնակարգումն ու մրցունակ աշխատանքային շուկայի ստեղծումը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014-2016 թթ. | Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| քննարկում՝ սահմանելով նաև այդ հասկացությունը: | | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | | |
| 1.14. Օրենքի 30-րդ հոդվածում որպես օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության տարածքից արտաքսման գործ հարուցելու հիմք նախատեսել նրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապօրինի գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում ապօրինի բնակվելը: | օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության տարածքից արտաքսման գործ հարուցելու հիմքերի շրջանակի ընդլայնումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 2015 թ. | |
| 1.15. Օրենքի 34-րդ հոդվածից հանել արտաքսման մասին դատարանի որոշման մեջ օտարերկրացու արտաքսման օրը, երթուղին, պետական սահմանի անցման կետը նշելու պարտականությունը՝ այդ լիազորության իրականացումը վերապահելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: | արտաքսման իրատեսական մեխանիզմի ներդրումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | |
| 1.16. Հայաստանի Հանրապետությունում ապօրինի գտնվող օտարերկրացիների վերադարձի գործընթացի հստակեցում՝ կամավոր մեկնման | մարդու հիմնարար իրավունքներին համապատասխանող հստակ ընթացակարգերի ամրագրումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն | 2015 թ. | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,<br>ՀՀ կառավարության 2013 թ.-ի հուլիսի 18-ի «Հայաստանի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| համար տրամադրված ժամանակ իրականացնելով որոշ պարտավորություններ՝ նրանց փախուստը կանխելու և արտաքսման որոշումը բողոքարկելու համար՝ վերջինիս դեպքում պարտադիր տրամադրելով անվճար իրավաբանական օգնություն և ներկայացվածություն: Փախուստը կանխելու նպատակով որոշակի պարբերականությամբ իրականացնել ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանում ներկայանալը, առանց թույլտվության բնակության վայրը թողնելու արգելքը, ֆինանսական վիճակը հաստատող փաստաթղթերի ներկայացումը և այլն: | | առընթեր  ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | | Հանրապետության սահմանային անցման կետերում և տարանցիկ գոտիներում հատուկ կացարան-ների գործունեության ու օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» N 783-Ն որոշում |
| 1.17. Օրենքը լրացնել այն անձանց կացության կարգավիճակ տրամադրելու նորմով, ում նկատմամբ «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով կիրառվել է  չվերադարձելիության սկզբունքը: | փախստական չհանդիսացող, բայց միջազգային պաշտպանության իրավունք ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր  ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | |
| 1.18. Կամավոր վերադարձի համար առավելագույն ժամկետի սահմանում, կամավոր վերադարձի ժամկետի | ընտանիքի միասնության ու անչափահասների համար հիմնական կրթական | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 2015 թ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| երկարացման նախատեսում (հաշվի առնելով առանձին դեպքի կոնկրետ հանգամանքները, ինչպիսիք են՝ գտնվելու տևողությունը, դպրոց հաճախող երեխաների առկայությունը, ընտանեկան ու սոցիալական այլ կապերի առկայությունը), ինչպես նաև այդպիսի կամավոր վերադարձի ժամանակահատվածի երկարացման արգելքի դեպքերի սահմանում | համակարգից օգտվելու հնարավորության ապահովումը, խոցելի խմբերի հատուկ կարիքների ամրագրումը | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | | |
| 1.19. Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասում, 6-րդ հոդվածի 3-րդ մասում և 23-րդ հոդվածի «ժա» կետում «քաղաքական» բառի չնախատեսում | տերմինների միասնության ապահովումը՝ ապաստան հայցողներին միայն քաղաքական հիմքով չառանձնացնելու ու խտրական վերաբերմունք չդրսևորելու նպատակով | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | այլ իրավական ակտեր, որտեղ ապաստանի տրամադրումը սահմանափակված է միայն «քաղաքական» տարատեսակով |
| 1.20. Օրենքի 29-րդ հոդվածի վերանայում՝ բովանդակային առումով դրանում նախատեսելով անօրինական միգրացիայի դեմ պայքարի ընդհանուր դրույթներ կամ ուղղություններ, իսկ հոդվածի բովանդակությունը ներկայացնել որպես գործատուի՝ իր կողմից ստանձնված պարտականությունները չկատարելու կամ պատշաճ չկատարելու դեպքում պատասխանատվության նախատեսում | օրենքի 29-րդ հոդվածի վերնագրի և բովանդակության համապատասխանեցումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 2015 թ. | Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք |
| 1.21. Օրենքի 6-րդ գլխի վերնագրի վերանայում | կիրառվող տերմինների հստակեցումը | ՀՀ տարածքային կառավարման | 2015 թ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | նախարարության միգրացիոն պետական ծառայություն | | |
| 1.22. Օրենքի 15-րդ հոդվածում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի և նրանց ընտանիքի անդամների համար կացության թույլտվության տրամադրման հիմքի սահմանում՝ հնարավորություն ընձեռելով օգտվել աշխատանքային շուկայից, մասնագիտական վերապատրաստման ու կրթության հնարավորություններից, աջակցություն ու պաշտպանություն ստանալուց | մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի և նրանց ընտանիքի իրավունքների ապահովումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 2014 թ. | |
| 1.23. Օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու արտաքսման բացառությունների վերանայում | հոդվածով նախատեսված առանձին բացառությունների կիրառման գործնական ապահովումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | |
| 1.24. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիներին օրենքի 23-րդ հոդվածով սահմանված աշխատանքի թույլտվություն ստանալու բացառություններում ներառում | Միասնական տնտեսական տարածքին անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների ապահովումը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014 թ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | | |
| ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 2. «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | |
| 2.1. Փախստականի ճանաչման դադարեցման, չեղյալ հայտարարելու և բացառման հիմքերը միջազգային նորմերին համապատասխանեցում, մասնավորապես, բացառելով փախստականի նկատմամբ դադարեցման ընթացակարգի կիրառումն այն դեպքում, եթե անձը լքում է Հայաստանի Հանրապետու-թյունը և այդ ընթացքում լրանում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ժամկետը, իսկ քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության պետություն նրա վերադարձն անհնարին է: | փախստականի ազատ տեղաշարժի իրավունքի պաշտպանությունը և չվերադարձելիության սկզբունքի ապահովումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014 թ. | |
| 2.2. Ապաստան հայցողներին և փախստականներին իրենց իրավա-կան կարգավիճակի, իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև լրացուցիչ անկախ իրավաբանական խորհրդատվության ու անվճար իրավաբանական օգնության տրամադրում | ապաստան հայցողների և փախստականների անվճար իրավաբանական օգնություն ստանալու, ինչպես նաև այլ իրավունքների ապահովումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014 թ. | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք |
| 2.3. Ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվող ծառայությունների ընդլայնում և հստակեցում՝<br>ա) մասնագիտական | ապաստան հայցողների և փախստականների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014 թ. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ.-ի նոյեմբերի 19-ի «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| վերապատրաստման, այդ թվում՝ որակավորումը բարձրացնելու համար նախատեսված վերապատրաստման ապահովում,<br>բ) անչափահասների կրթություն,<br>գ) ինտեգրման միջոցների ապահովում (լեզվի դասընթացներ, մշակութային կողմնորոշման դասընթացներ, առօրյա կյանքին վերաբերող տեղեկատվություն, հանրային կյանքին մասնակցություն և այլն): | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | տեղավորելու և կենսաապա-հովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին»<br>N 1440-Ն որոշում |
| 2.4. Առանց ուղեկցության երեխաների հետևյալ իրավունքների ապահովում՝<br>ա) հարցազրույցի անհապաղ իրա-կանացում՝ առանց անհարկի ուշաց-ման՝ դրա համար հարմարեցված և համապատասխանեցված սենյակ-ներում ու վերապատրաստված մասնագետների կողմից,<br>բ) լիազորված պետական մարմինների հետ անհարկի լրացուցիչ հանդիպումները նվազագույնի հասցնելը և այլն: | առանց ուղեկցության երեխաների շահերի և իրավունքների պաշտպանությունը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 2014 թ. | ըստ անհրաժեշտության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.5. «ԵՎՐՈԴԱԿ»-ի կանոնակարգով նախատեսված պայմաններով ապաստան հայցողներից մատնահետքեր վերցնելու և դրա ընթացակարգի նախատեսման քննարկում | ապաստան հայցողների նույնականացման համար մատնահետքերի վերցման տվյալների բազայի ներդրումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր  ազգային անվտանգության ծառայություն | 2016 թ. | ըստ անհրաժեշտության |
| 2.6. Երեխայի խնամակալների կամ հոգաբարձուների կողմից ապաս-տանի հայց ներկայացնելու կարգի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող երեխային խնամակալ կամ հոգա-բարձու նշանակելու ընթացակարգի հստակեցում | ապաստան հայցող երեխաների իրավունքների իրականացման մեխանիզմի ներդրումը և կանոնակարգումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 2015 թ. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ.-ի նոյեմբերի 19-ի «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահով-ման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1440-Ն որոշում |
| 2.7. Ապաստան հայցողին թարգմանչի ծառայություններից օգտվելու հնարավորության տրամադրում | ապաստանի հայցերի քննարկման արդյունավետության բարձրացումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014 թ. | ըստ անհրաժեշտության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.8. Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում ապաստան հայցողի և նրա ընտանիքի անդամների վարքագծի կանոնների ամրագրում | ապաստան հայցողի և նրա ընտանիքի անդամների վարքագծի կանոնների՝ որպես համապարտադիր վարքագծի կանոնների նախատեսումը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2014 թ. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ.-ի նոյեմբերի 19-ի «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահով-ման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1440-Ն որոշում |
